



2017 թվականի հոկտեմբերի 21-ին, Սբ. Մատթեոս, Մարկոս, Ղուկաս և Հովհաննես Ավետարանիչների հիշատակի օրը դարձավ տոնական Քվենո Քարթլիի տարածաշրջանի Կարմիր գյուղի բնակչության համար: Տեղացիները՝ մեծից փոքր հավաքվել էին գյուղի Սրբոց Ավետարանչաց մատուռում՝ մասնակցելու տոնին նվիրված Սուրբ Պատարագին:

Օրվա խորհրդին նվիրված, Վիրահայոց թեմի առաջնորդարանի աջակցությամբ, կազմակերպվել էր թբիլիսահայ հավատացյալների ուխտագնացությունը Սուրբ մատուռ: Շուտով հավատացյալներին միացավ նաև Շահումյանի Սուրբ Աստվածածին եկեղեցու հավատացյալների խումբը՝ Քվենո Քարթլիի տարածաշրջանի Բոլնիսի և Թեթրիժլարոյի հայության հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Հուսիկ քահանա Հարությունյանի ղեկավարությամբ:



Կարմիր գյուղ էր ժամանել Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոսը Միրզախանյանը՝ հոգևոր դասի ուղեկցությամբ: Գյուղամիջում Թեմակալ առաջնորդը զրույց ունեցավ տեղի ղեկավար անձանց և արժանավոր հայորդիների հետ:

Հավատացյալներով լեփ-լեցուն Սրբոց Ավետարանչաց մատուռում Վիրահայոց թեմի առաջնորդի հանդիսապետությամբ տոնական Սուրբ և Անմահ Պատարագ մատուցեց Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Սամվել քահանա Թորոսյանը:



Հընթացս Սուրբ Պատարագի օրվա խորհրդի մասին հավուր պատշաճի քարոզ ասաց Վազգեն Սրբազանը: Անդրադառնալով Ավետարանիչների հիշատակի տոնին, Տեր Վազգեն եպիսկոպոսը խոսեց նրանց գործունեության, խորհրանիշների մասին, ավետարանիչների ժամանակաշրջանը զուգահեռներով կապելով արդի ժամանակների հետ:

Սուրբ Պատարագը Սրբոց Ավետարանչաց մատուռում ուղեկցվեց Թբիլիսիից ժամանած Սուրբ Էջմիածին եկեղեցու երգչախմբի երգեցողությամբ:

Ամբողջ Պատարագի ընթացքում գյուղի մանուկները, շրջապատելով Թեմակալ արաջնորդին, մասնակցեցին Սուրբ Ծեսին, վերջում տեղի հավատացյալների և ուխտավորների հետ միասին ստանալով նաև սուրբ հաղորդություն:

Շուրջ 200 ընտանիք ունեցող Մառնեուլի շրջանի Կարմիր գյուղը, 100 տարվա պատմություն ունի:Այստեղ հիմնականում բնակվում են Արևմտյան Հայաստանից տեղահանվածների սերունդները: Նրանք պահել ու պահպանել են լեզուն, հավատքը, ազգային արժեքները:



2012 թվականին Վիրահայոց թեմի առաջնորդարանի աջակցությամբ և տեղացիների հովանավորությամբ, այստեղ կառուցվեց և հանդիսավորապես օծվեց Սրբոց Ավետարանչաց մատուռը:

Սրբոց Ավետարանչաց մատուռում թեմի հոգևոր սպասավորները պարբերաբար մատուցում են Սուրբ Պատարագներ և անցկացնում ծիսական արարողություններ: Գյուղի արժանավոր զավակների աջակցությամբ, Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված գյուղում կանգնեցվեց հիշատակի խաչքար: